№ 127 ՅՈՒԼԻՍԻ 28 (ՕԳՈՍՏՈՍԻ 9) 1878 ՅՈՒԼԻՍԻ 28 (ՕԳՈՍՏՈՍԻ 9) № 127

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1878 թվից

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց անկախ պարապմունք է հարկաւոր։ —Ներքին տեսութիւն։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Իտալիա։ Նամակ Գերմանիայից։ Արտաքին լուրեր—«Մըշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Մեր այցելութիւնը Անիի աւերակներին։

ԿԻՆԱՆՑ ԱՆԿԱԽ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ Է ՀԱՐԿԱՒՈՐ

Մի ժամանակ հայ կինը չէր կարող անկախ պարապմունք ունենալ, նա չէր կարող դուրս գալ իր ընտանեկան սահմանափակ, նեղ շրջանից։ Հայ աղջիկը պէտք է ապրէր իր ծնողների հաշուով, հայ կինը իր ամուսնի հաշուով և միայն տնային գործերով պէտք է զբաղվէին։

Որքան էլ մեր ընտանիքը ճրնշէր հայ կնոջը, որքան էլ բռնադատէր նրա անհատական իրաւունքները, նա անկարող էր բողոքել այդ ճնշման դէմ, չէր կարող ազատվել իր անհատական իրաւունքները ոտնակոխ անող շրջանից։ Այդ շրջանից ազատվելու համար հարկաւոր էր անկախ պարապմունք ունենալ, հարկաւոր էր միջոց գտնել օրական հաց ճարել անկախ պարապմունքով. իսկ հայ կանայք այդ միջոցներից զուրկ էին։

Բայց այդ ժամանակները անցան։ Մեր կանայք և օրիորդները հասկացան, որ նրանց պարապմունք է հարկաւոր և երբ միջոց ներկայացաւ, մին միւսի հետևից սկսեցին ընդունել վարժուհիների և ուսուցչուհիների պաշտօններ մեր ազգային դպրոցներում։

Օրիորդաց ազգային դպրոցները, որոնք առաջ չէին կարողանում մի վարժուհի գտնել, հասան այն դրութեանը, որ այժմ մեծ ընտրութեամբ են վարժուհիներ ընդունում և ընդունվածները իրանց բաղդաւոր են համարում, որ կարող են իրանց օրական ապրուստը գտնել։

Բայց ի հարկէ մեր օրիորդաց դպրոցները չեն կարող պարապմունք տալ պաշտօններ ցանկացող բոլոր հայ կանանց, ուրեմն նրանց մեծ մասը պէտք է որոնեն ուրիշ պարապմունքներ։

Այդ տեսակ պարապմունքներ ոչ թէ միայն Թիֆլիսում, բայց և մեր գաւառական քաղաքներում, որտեղ դեռ կանանց աշխատանքի պահանջ չէ զգացվում, դժուար չէ գտնել, եթէ միայն մեր կանայք թողնեն իրանց դարևոր նախապաշարմունքները։ Թիֆլիսի օտարազգի վաճառականների մօտ գործակատարների և հաշուապահների պաշտօնները շատ անգամ կանայք են կատարում։ Մի՞թէ հայ կանայք չէին կարող նոյնը անել։ Նրանք կարող էին ընդունել թէ օտարազգի և թէ մեր վաճառականների մօտ գործակալների և հաշուապահների պաշտօնները։ Բացի սորանից մի՞թէ մեր կանայք չէին կարող զանազան արուեստներով պարապել, ինչպէս այդ անում են օտարազգի կանայք։ Նրանք կարող էին իրանք փոքրիկ խանութներ ունենալ, սեփական արուեստանոցներ բաց անել։

Վերջապէս բացի մեր օրիորդական դպրոցների մէջ վարժուհիներ լինելուց, մեր կանայք կարող էին վարժուհիներ և վերակացուհիներ լինել և մեր արական ուսումնարաններում։

Շմարիտ է, որ այդ բոլորը անելու համար հարկաւոր է որ թէ մեր կանայք և թէ ինքն հասարակութիւնը հրաժարվէին իրանց վրա ճնշող նախապաշարմունքներից,—բայց ով չը գիտէ որ այն ժամանակը մեզանից հեռու չէ երբ հայ օրիորդի, կամ կնոջ համար վարժուհի լինելն էլ հայերի մէջ ամօթ էր համարվում.... Իսկ երբ մի քանիսներ ընդունեցին այդ պաշտօնը, միւսներն էլ հետևեցին նրանց օրինակին։

Մի և նոյնը կը լինի և ուրիշ պարապմունքների հետ։

Կանցնեն տարիներ,—և հայ կանայք կը կատարեն գործակալների, հաշվապահների, տղայոց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՆԻԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԻՆ

—

IV

Մի ժամից յետոյ, մենք դարձեալ չրջում էինք Անիի աւերակների մէջ։ Մենք մտանք Անիի մայր եկեղեցին, որի չինութիւնը ինչպէս յայտնի է, սկսված է Սմբատ Բ-ի թագաւորութեան միջոցում 989 թ. և վերջացած է նրա եղբօր կնոջ, կատրամիտէ թագուհու ձեռքով։ Սրա գմբեթը քանդված է ինչպէս ասում են մօտ 50 տարի առաջ, զանգակատուն չէ երևում. չը գիտենք չէ եղել չինված նրա ժամանակից, թէ դարեր անցնելով քանդվել ու ծածկվել են այնպէս, որ նկատելի չէ հետքը անգամ։ Եկեղեցու արևելեան պատի վրա երևում են հանված քարերի տեղեր, որոնք երևի մարմարեայ քարեր են եղել, լցված արձանագրութեամբ. այդ կողմի պատը ծայրէ ի ծայր ճեղքված է և շատ երկիւղալի է, որ երկար չը դիմանայ։ Եկեղեցին շատ հոյակապ է. հիանալի նրբութիւն ունի և այնպիսի մեծ քարերից է շարված, որ մարդ զարմանում է, թէ ինչպիսի ձեռքեր են շարժվել դրանց բարձրացնելիս։ Տըրդատ ճարտարապետի քանքարը քանդակագործութեան արհեստի մէջ երևում է ձեզ այդտեղ իր բոլոր կատարելագործութեամբ։ Եկեղեցու ներսը որ կողմը որ նայէք, ամեն տեղ լցված է գըրվածներով այցելողների կողմից։ Դրանցից մի քանիսները լակօնական խօսքեր են, ոմանք մի քանի սուր դատողութիւններ, իսկ ոմանք այսքան թէ՝ «Ես եկայ Անի, այս ինչ թւականին» և այլն։

Մեր ձեռքին կար պ. Տէր-Աբրահամեանցի «Տեղեկագրութիւն Անիի» գիրքը, որի մէջ կան տպագրված Անիի մի քանի աւերակների արձանագրութիւններ։ Առհասարակ դժուարանում էինք կարդալ արձանագրութիւնները առանց այդ գրքի օգնութեան։ Թէև քաղցր էր մեզ երկար մնալ այդ եկեղեցում, որի համար Սմբատ Բ. ոչինչ չը խնայեց, բայց ժամանակի սակաւութեան պատճառով, շտապում էինք ուրիշ տեղեր այցելելու։

Մայր եկեղեցուց փոքր ինչ հեռու դէպի արևելք, գտնվում է Ամենափրկիչ եկեղեցին, ներսը զարդարված մի քանի առաքեալների պատկերներով։ Այս եկեղեցին չրջանակաձև է ու չինված է սև քարերից։ Սրա մուտքը արևմտեան կողմից է և բաւական քանդված է։ Մօտը կան մի քանի քանդված ձիթհաններ, որոնք ինչպէս երևում է եկեղեցու արևմտեան պատի արձանագրութենից, պատկանած են եղել այդ եկեղեցուն։ Ցունաց եկեղեցին, որ դրանից մի քիչ հեռու է, զարդարված է նոյնպէս զանազան առաքեալների պատկերներով։ Այդ եկեղեցին էլ բաւական նրբութիւն ունի. սրա արևմտեան կողմը բոլորովին քանդված է։ Սրանից յետոյ մեր առաջնորդը (հայր սուրբը մեզ մարդ էր տուել, ամեն տեղ ցոյց տալու) տարաւ մեզ դէպի ներքև ու ցոյց տուեց ստորերկրեայ ճանապարհը, որին տեղական ժողովուրդը տուել է յարմարաւոր անուն «գիդան-գեալմեազ»։ Այս ստորերկրեայ ճանապարհի մուտքը փոքր է, այնպէս որ մարդ կզելով պէտք է կարողանայ ներս գնալ, թէև ներսը մօտ 5 սաժէն գնալուց յետոյ լայնանում է այնքան, որ մարդ ազատ կարող է առաջ գնալ։ Այդ ճանապարհը երկու բաժանմունք ունի. մինը ուղղակի գնում է քաղաքի (Անիի) տակը, իսկ միւսը ներքև իջնելով, Ախուրեան գետի տակից գնում է և հանդիպակաց լեռներից դուրս է գալիս։ Միայն մարդ շատ պինդ սիրտ պէտք է ունենայ, որ համարձակվի մտնել այդտեղ, որովհետև բացի այն որ կարող են այդտեղ գազաններ լինել, նաև այնքան մութն է, որ առանց ճրագի ոչինչ չէ երևում։ Իզուր չեն «գեդան-գեալմեազ» (գնացողը չի յետ դառնայ) կոչում։

Ստորերկրեայ ճանապարհից մենք իջանք ձորի մէջ։ Այդտեղ կայ չինված մի կամուրջ Ախուրեանի վրա սպիտակ քարերից, որի անցքը քանդված է. կան նաև մի քանի փոքրիկ մատուռներ գետի եզերքը։ Ձորից վեր բարձրանալով, գնացինք քաղաքից փոքր ինչ հեռու նայելու այն միջնաբերդը, որ մի ժամանակ եղած է Անի քաղաքի ամրոցը։ Դա չինված է մի բարձրաւանդակ տեղ ու շատ անառիկ դրութիւն ունի։ Բայց այն, որ չորս կողմը զարհուրելի ձորեր կան, նաև չինված են եղել պարիսպներ ձորի վրա, որոնց հետքերը դեռ ևս կան։ Միջնաբերդումն է եղել Բագրատունի թագաւորների պալատը, բայց այժմ նրա հետքը անգամ չը կայ։ Բոլորը քանդված են. կայ մնացած մի փոքրիկ եկեղեցի սև քարերից, որ երևի բերդի եկեղեցին է եղել. սրա էլ, բացի գմբեթից, երկու հանդիպակաց պատերը քանդված են։

Այնուհետև մենք վերադարձանք քաղաք, նայելու ուրիշ աւերակները։ Հեռուից երևում էր Պահլաւունեաց պալատը, որի պատը զարդարված է հազար ու մէկ քանդակներով, նախշերով, բայց ափսոս որ ներսի չինութեան մեծ մասը քանդված է։ Ով քաջ նախարարներ, ակամայ յիշեցի ես, երանի այն ժամանակ, երբ դուք հագնում էիք ձեր զարդարված հագուստները այս հոյակապ պալատի մէջ.... Ամենքից լաւ աչքի են ընկնում ձեզ երկու մենարանները որոնք երկուսն էլ գտնվում են նոր դրութեան մէջ և շատ անշան բաներ կան քանդված։ Մենարանների իւրաքանչիւրի բարձրութիւնը կը լինի ուղիղ 40 արշին. օձապտոյտ սանդուղքներով մենք բարձրանալ թէ օտարազգի և թէ մեր վաճառականների մօտ գործակալների և հաշուապահների պաշտօնները։ Բացի սորանից մի՞թէ մեր կանայք չէին կարող զանազան արուեստներով պարապել, ինչպէս այդ անում են օտարազգի կանայք։ Նրանք կարող էին իրանք փոքրիկ խանութներ ունենալ, սեփական արուեստանոցներ բաց անել։

Վերջապէս բացի մեր օրիորդական դպրոցների մէջ վարժուհիներ լինելուց, մեր կանայք կարող էին վարժուհիներ և վերակացուհիներ լինել և մեր արական ուսումնարաններում։

Շմարիտ է, որ այդ բոլորը անելու համար հարկաւոր է որ թէ մեր կանայք և թէ ինքն հասարակութիւնը հրաժարվէին իրանց վրա ճնշող նախապաշարմունքներից,—բայց ով չը գիտէ որ այն ժամանակը մեզանից հեռու չէ երբ հայ օրիորդի, կամ կնոջ համար վարժուհի լինելն էլ հայերի մէջ ամօթ էր համարվում.... Իսկ երբ մի քանիսներ ընդունեցին այդ պաշտօնը, միւսներն էլ հետևեցին նրանց օրինակին։

Մի և նոյնը կը լինի և ուրիշ պարապմունքների հետ։

Կանցնեն տարիներ,—և հայ կանայք կը կատարեն գործակալների, հաշվապահների, տղայոց

դպրոցների մէջ վարժուհիների և այլ հասարակական պաշտօններ։ Եւ այդ բոլորը նոյնքան սովորական կերևայ, ինչպէս այժմ սովորական է երևում որ հայ կինը վարժուհի է օրիորդաց դպրոցում։

Մինչև որ հայ կինը չը համոզվի որ նրան հարկաւոր է անկախ լինել, պարապմունք ունենալ, մինչև որ նա չը հրաժարվի այս կամ այն աշխատանք և պարապմունք ամօթալի կամ անվայել համարելու նախապաշարմունքից, նա երբէք չի պատուի իր անձը, երբէք երջանիկ չի լինի ընտանիքում։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Զայմ, 20 յուլիսի

Առաջարկելով Զայմի ժամանակաւոր հիւանդանոցի յարգոյ հասարակութեանը նուիրատուութիւն անել յօգուտ «Արարատեան ընկերութեան» փոքր միջոցում ժողովեցի յետագայ գումարը։ Խնդրեմ տպագրէք ձեր պատուական լրագրի համարներից մէկի մէջ նուիրատուների ազգանունները և նրանց ընծայած գումարը և ստացման մասին հաղորդէք ինձ ձեր լրագրի միջոցով։— Բժիշկ Զարգարեանց 10 բուբլ, Վասիլի Մէշնիկով 3 ր., Բաստամեանց 3 ր., Բժիշկ Դաւթեանց 10 ր.։—Ընդամենը 26 բուբլ ուղարկում եմ այս նամակի հետ։

Յ. Դաւթեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երևան, 22 յուլիսի

Ահա ուղարկում եմ ձեզ երկրորդ անգամ իմ հաւաքած 10 բուբլ նուիրատուութիւնները «Արարատեան ընկերութեան» համար. խնդրում եմ հրատարակել նուիրատուների անունները։— Վահան Պողոսեանց 1 բուբլ 50 կոպէկ, Արտեմ Այդինեանց 1 ր., Առաքել Ղուկասեանց 1 ր., Փիլիպոս—Վասիլ 50 կ., Երուանդ Տէր-Անտոնեանց 1 ր., Թովմաս Մէրեանց 1 ր., Արտեմ Մինասեանց 1 ր. 20 կ., Միքայէլ Մարգարեանց 1 ր., Աւետիս Տէր-Թադէոսեանց 20 կ., Գալուստ Յովհաննիսեանց 20 կ., Մկրտիչ Գալուստեանց 20 կ., Մի հայ քահանայ 20 կ., Մի գիմնազիստ 30 կ., Յարութիւն Ռուշանեանց 20 կ., Մկրտիչ Սանթրոսեան 10 կ., Աղէքսանդր Օշականեանց 10 կ., Խաչատուր Տէր-Մարուքեանց 30 կոպէկ։—Ընդամենը 10 բուբլ։

Բացի սորանից 10 օրինակ Դաւիթ-բէգ, 10 օրինակ Ստորագրութիւն Ս. Գեղարդայ վանից։

Սիմէօն Գուլամիրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք ՇՈՒՇՈՒՅ 20 բուբլ տ. Մ. Լազարեանից հետևեալ նամակի հետ։ «Իմ հանգուցեալ ամուսին Յարութիւն Լազարեանցի համար հոգեհաց տալու փոխարէն ուղարկում եմ ձեզ 20 ր. և խնդրում եմ այդ դրամը հասցնել հրդեհից վնասված հայ վանեցիներին։ Մ. Լազարեանց։»

Ստացանք յօգուտ «Արարատեան ընկերութեան» 2 բուբլ տոպօդրաֆ Գասպար Նասիբեանից։

ԽԱՐԿՈՎԻՑ մեզ հաղորդում են, որ բժշկապետ Կավալչուկովի սպանման գործը, որի մասին արդէն յայտնի է մեր ընթերցողներին, կը քննվի Խարկովի նահանգական դատարանում սեպտեմբերի վերջերում, կամ հոկտեմբերի սկզբում։ Նամակագիրը խոստանում է հաղորդել իր ժամանակին դատաստանական գործը։

ԽԱՐԿՈՎԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի համալսարանի 4-դ և 5-դ կուրսի բժիշկ-ուսանողները կառավարութեան հրամանով հրաւիրվեցան բժիշկների օգնականների պաշտօններ կատարել արձակուրդի ժամանակ։ Այս հրաւէրքը մեծ ուրախութեամբ ընդունեցին բժիշկ-ուսանողների մեծ մասը և ստանալով առատութեամբ նշանակած վարձատրութիւնը, ուղևորվեցին իրանց նշանակած տեղերը։

ՆՈՒԽՈՒՅ մեզ հաղորդում են, որ ամսիս 20-ին գիշերով եկած յորդ անձրևներից հեղեղ է եկել։ Գետի ափին գտնվող տները և այգիների մեծ մասը լցվել են Ղուրուչայ գետի բերած տղմով։ Վնասը դեռ յայտնի չէ։

ԲՕՐԺՕՄԻՑ մեզ հաղորդում են, որ երկուշաբթի յուլիսի 24-ին, երեկոյեան 7 ժամին, կազակների մի օֆիցեր, ներկայանալով իր գլխաւորին, դնում է սեղանի վրա իր չքանչանները, որոնք բաղկացած էին երկու խաչերից և մի մեդալից և գնում է անտառը, իր վրա արձակում է ատրճանակ և իսկոյն մեռնում է։ Գործը յանձնված է քննիչին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Այստեղ իմացվեցաւ, որ Բաստամեան Վահան վարդապետը, որ վերադառնալով Եւրօպայից պատրաստվում էր սեպտեմբերին հարցաքննութիւն տալ կայսերական համալսարանում եկեղեցական իրաւագիտութեան մագիստրոսի գիտական աստիճանը ստանալու համար, կոչվեցաւ Կաթողիկոսի հրամանով Էջմիածին տեսչութեան պաշտօնով ճեմարանի մէջ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

«Голосъ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետևեալը։ Երբ որ կօնդրէսը Սան-Ստէֆանօի նախնական դաշնագրութեան վերջին յօդուածներն էր քննում, Կ. Պոլսի հայերը նկատեցին, որ իրանց վերաբերեալ 16-որդ յօդուածը Հայաստանի պաշտպան Ս. Գրիգորի տօնին էր քննվում։ Այս բարեբաղդ պատահմունքը նշանաւոր կերպով զօրացրեց նրանց յոյսերը։ Ահա թէ ինչի համար բոլորովին յուսահատութեան մէջ ընկան, երբ իմացան որ իրանց պատգամաւորների Բերլինում ներկայացրած օրգանական կանոնադրութիւնը մերժվեցաւ և նրա տեղը բռնեց Նրանց ձգտումներին աւելի պակաս համապատասխանող մի հականախագիծ։

Խորէն արքեպիսկոպոսի հեռագիրը, որով տեղեկութիւն էր տալի պատրիարքին իր առաջարկութեան մերժելու մասին, ստացվեցաւ Կ. Պոլսում յուլիսի 11-ին, և միւս օրը Ներսէս պատրիարքը Տէրապիա ուղևորվեցաւ, անգլիական դեսպանատանը—համոզելու պ. Լայարդին պահպանել անգլիական կառավարութեան Խրիմեան եպիսկոպոսին տուած խոստմունքը նրա Լօնդօն գտնված ժամանակ, մինչև կօնգրէսի հաւաքվելը։ Եւ իսկապէս, ամենքին յայտնի է, որ հայերին հասած առնաջողութեան պատճառը Բերլինում, պէտք է առաւելապէս անգլիական լիազօրներին համարել և որ մանաւանդ մարկիզ Սալիսբիւրի անպայման մերժումը էր հայոց խնդիրը։ Բայց պ. Լայարդը պատրիարքի գանգատների վրա ամենափոքր ուշադրութիւն ևս չը դարձրեց։ «Երբէք—ասաց նա—Անգլիան չի համաձայնվի հայոց ինքնավարութեանը. դա կը նշանակէր հայերին Ռուսաստանի դրօշիք դարձնել։»—Դուք մեզ, այնու ամենայնիւ, չէք արգելի—պատասխանեց պատրիարքը,— հոգով ռուսներ լինել, որովհետև միայն Ռուսաստանին և Սան-Ստէֆանօյի դաշնագրի որոշումներին ենք պարտական մեր վիճակի այն փոքր բարելաւութիւնների համար, որ մենք ստանալու ենք Բերլինի կօնգրէսից։ Դուք, անգլիացիք, միայն Թիւրքերին էք համակրում, և արևելեան քրիստոնեաների վիճակը ոչինչ նշանակութիւն չունի ձեզ համար։

Պ. Լայարդը, ինչպէս երևում է նեղացած պատրիարքի պատասխանից, իզուր փորձում էր ապացուցանել պատրիարքին, որ Անգլիայի հովանաւորութիւնը Հայաստանի համար Ռուսաստանի օգնութենից աւելի շահաւէտ կը լինի։ «Ոչ, ոչ կրկնեց պատրիարքը,—անգլիացիք և Թիւրքերը այժմ մեզ համար մի և նոյն են, հայերը Թիւրքերից ոչինչ սպասելիք չունեն։» Սրանից յետոյ, անգլիական դեսպանատան կամ Բէյրայում անգլիական գաղթականութեան պատկանող զանազան անձինք, գալիս էին պատրիարքի մօտ և համոզում էին նրան Անգլիայի հովանաւորութեանը աւելի հաւատ ընծայել, բայց սրբազան Ներսէսը ամենքին նոյնպիսի պատասխան տուեց, ինչպէս և պ. Լայարդին։

Իշխան Լօբանով բոլորովին ուրիշ ընդունելութիւն արաւ պատրիարքին։ Առաջնորդի խնդրի համաձայն, նա յօդուտ հայոց գործին մի ստիպողական հեռագիր ուղարկեց Բերլին և ես հաւատացած եմ, որ նրա միջամտութիւնը վերջին բօպէում աւելի ևս օգնեց Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածի բարելաւելուն, որով այժմ վերջնականապէս որոշվեցաւ ասիական հայերի վիճակը։

Այս յօդուածը, այն կերպ ինչ կերպով նա յայտնի է Եւրօպայից ստացած հեռագիրներից, տալիս է, իմ կարծիքով, հայոց հասարակութեան աւելի մեծ իրաւունքներ, քան թէ ենթադրում էին սկզբից։ Իսկապէս, եթէ հաւատանք այս հեռագիրներին, Հայաստանը դրվում է ոչ թէ միայն Անգլիայի, այլ և բոլոր մեծ պետութիւնների հովանաւորութեան ներքոյ. այս բանից առաջ է գալիս ոչ միայն Թիւրքիայի պարտաւորութիւնը՝ իրագործել տեղական գործերի դրութեամբ առաջ եկած վերանորոգութիւնները, այլ և հայերին իրաւունք է տրվում առաջ բերել այս բէֆօրմները և իրանցից ամեն միջոցներ գործ դնել առանց յետաձգութեան սրանց գործ դնելու համար։

Հայոց ազգային ժողովի նիստը կայացաւ յուլիսի 19-ին Կումկապում, պատրիարքի նախագահութեամբ։ Սրբազան Ներսէսը այս նիստում պէտք է հաշիւ տար պատգամաւորների Բերլինում ունեցած բանակցութիւնների մասին։ Մի քանի ոգևորված մարդիկ մտադրվում էին առաջարկել ժողովին՝ բողոքել ազգի անունով կօնգրէսի վճռի դէմ մէկ հանդիսաւոր յայտարարութեամբ ուղղած բոլոր մեծ պետութիւններին, բայց պատրիարքի տուած բացատրութիւններից յետոյ, այս դիտաւորութիւնը թողնվեցաւ։

Հետաքրքիր է հետևեալ մանրամասնութիւնը

ցանք նրանց ծայրը։ Այդտեղից երևում է ոչ միայն Անին իր անառիկ դիրքով, այլ և նրա բոլոր շրջակայ գիւղերը, ձորերը, լեռները՝ երևում են ձեր աչքի առաջ։ Մենարաններից մինը քիչ լայն է ու կից է մի մէչիդի *), իսկ միւսը նեղ է ու չինված է առանձին։ Ուստի ես կարծում եմ, որ այն լայնը, որ և կից է մէչիդին, մօլլայի կոչարանը եղած կը լինի, որի ծայրին կանգնելով կրօնասէր մօլլան աղօթելու է հրաւիրել իր հօտը, իսկ միւսը որ չինված է առանձին և ուղիղ քաղաքի կենտրոնումն է, գուցէ պահապան զինուորի համար է չինված եղել, որի ծայրին կանգնելով արթուն զինուորը, ամեն րոպէ հրակելիս է եղել քաղաքի վրա....

V

Մէչիդը չինված է ահագին կարմիր քարերից և նայում է ձորի վրա, որի միջից զարհուրելի հառաչիւններով հոսում է Ախուրեանը իր պղտոր ալիքներով։ Սարսափում է մարդ, որ գլուխը դուրս հանէ այդ չինութենից ու դէպի ձորը նայէ։ Այդտեղ պատահեց մեզ մի հայ գիւղացի որ նոյնպէս եկել էր նայելու Անին։—Դուք որտեղացի էք հարցրինք մենք։—Ես Հառիճեցի (Ղփչաղ) եմ ասաց գիւղացին ու շարունակեց, մենք գիւղովի միտք ունենք խնդիրք տալու կառավարութեան, որ թոյլ տայ մեզ, դանք այստեղ Անիից 2 վերստ հեռու, Ալաճայ լերան ստորոտը բնակարան չինենք, այստեղ շատ լաւ է. երկիրը շատ պտղատու է, մենք այստեղ կարող ենք շատ լաւ ապրել։—Ի հարկէ այդ խելացի մտադրութիւն է, այստեղ աղատ հողեր շատ կան, ուր կարող էք առատ վարել և ցանել և մէկ խօսքով հարուստ երկրագործութիւն սկսել։—«Մեր միտքն էլ այդ է, որովհետև մեր տեղերը այնքան քիչ է մնացել հող, որ մի մարդու ապրուստի համար բաւականութիւն չէ տալիս։» Մենք գովեցինք գիւղացու նպատակն ու խորհուրդ տուինք չտապել խնդիրք տալ։

Գիւղացին էլ մեզ հետ հրաւիրվեցաւ հացկերոյթի։

Երեկոյեան պատրաստվեցանք կրկին Ղօշվանք վերադառնալ գիշերելու համար, իսկ միւս օրը գնալ մեր քաղաքը։ Տխուր տպաւորութիւն գործեցին մեզ վրա Անիի աւերակները, մանաւանդ հսկայանման կանգուն պարիսպները, որոնք ամեն րոպէ յիշեցնում են Անի քաղաքի նախկին դրութիւնը։ Անիի պարիսպներից դուրս բաւական հեռու, կայ մի փոքրիկ եկեղեցի, որին մենք ժամանակ չունեցանք այցելելու։ Այս եկեղեցու վերաբերութեամբ, տեղական ժողովրդի մէջ մնացել է մի ծիծաղաշարժ աւանդութիւն։ Ասում են որ մի քանի «նախրճիներ» (հովիւներ) են եղել, որոնց վրա Անիի ժողովուրդը, զանազան պատճառներից նեղացած, թոյլ չէ տուել Անիի մէջ աղօթելու. դրանք էլ վրդովված ժողովրդի վարմունքից, բոլոր «նախրճիները» միասին հաւաքված այդ եկեղեցին չինել են, որ միւս անգամ աղօթելու համար Անի չը գնան ու ժողովրդի երեսը չը տեսնեն....

Ղօշվանքում մենք կրկին տեսնվեցանք հայր սուրբի հետ ու այս անգամ աւելի լաւ նիւթերի վրա առիթ ունեցանք խօսելու. ինչ որ պատմում էինք, վարդապետը գլխով էր անում, մի կարծիք որ և իցէ բանի մասին մենք չը կարողացանք իմանալ։ Մանգալով գիւղի մէջ ես ուղեցի մի քանի կարծիքներ լսել գիւղի բնակիչներից։—Հայրիկ, հարցրի ես մի ծերունու, դուք ինչ էիք անում, քանի որ ռուսաց ոտքը չէր կոխել այստեղ, քուրդերը ձեզ չէին նեղացնում։—Չէ աղա, մենք այսքան ժամանակ այստեղ բընակվում ենք, մի յարձակում չեն տուել մեզ վրա։ Թէև մօտիկ գիւղերից շատ բան են թալանել, միայն մեզ մինչև այսօր չեն մօտացել....—Ինչու, միթէ ձեզանից վախենում են, կամ խնայում են։—«Ո՞վ գիտէ, մեզ մօտ յափշտակող քուրդեր չեն եկել մինչև այսօր, կամ մեր բաղդիցն է, կամ Աստուծու ողորմութիւնը։» Կամենալով փորձել թէ ունեն արդեօք պատրաստի զէնքեր, որ հարկաւոր դէպքում բաց անեն, ասացի՝ «բայց դուք իմացել էք, որ քուրդերը մտադիր են այս քանի օրերս յարձակվել ձեր գիւղի վրա։»—Ուղիղ է աղա, դուք որտեղից գիտէք, հարցրին գիւղացիները, շարժված իմ խօսքերից։—«Այո, ուղիղ է, միայն նրանք այնքան խորամանկ են, որ առաջուց մարդ պիտի ուղարկեն ձեր գիւղը իմանալու ծածուկ կերպով, թէ ունէք պատրաստութիւններ՝ սուր, հրացան, չեն մտենայ, իսկ եթէ ոչ, բոլոր գիւղը այնպէս պիտի կողոպտեն, որ մի անասուն չը թողնեն։» Իմ հարցը բաւական հետաքրքրութիւն պատճառեց գիւղացիների մէջ, և ոչ թէ սրտնեղութիւն, որից երևում էր նրանց վստահութիւնը իրանց վրա։ Վերջապէս մինը նրանցից, որ մի առոյգ երիտասարդ էր, շատ չը կարողացաւ համբերել, այլ երեսի սովորական ժպիտով ասաց՝ «Աղա բոլորիս տանն էլ հիմի քիչը 5—10 հրացան կայ պատրաստի ու հարիւրաւոր էլ պատրոններ, թող գան բարով ու տեսնեն, թէ քանի քուրդ կը պառկացնենք հա....»

Միւս օրը մենք վերադարձանք Աղէքսանդրոպոլ։

Գ. Ղասապեանց

*) Այս չինութիւնը, որին ես կոչում եմ մէչիդ, նոյնպէս շատ հոյակապ է, կարմիր քարերով չինված. գուցէ Բագրատունի թագաւորների հզօր ժամանակ պալատ կամ դատարան լինի եղած, միայն թաթարների տիրապետութեան ժամանակ, երևի կերպարանափոխված է մէչիդի, որին կից չինված է և այդ մենարանը, միայն պատի վրա հայերէն արձանագրութիւններ կան։

նշանակել։ 61-որդ յօդուածում սկզբում ասված էր, որ այն միջոցները որ Թիւրքիան պէտք է ընդունէ Հայաստանի վերաբերութեամբ, պէտք է գործադրվեն մինչև ռուսաց զօրքերի դուրս գալը։ Այդ բանը պաշտպանում էին Ռուսաստանի և Ֆրանսիայի լեզուները։ Բայց լորդ Բիկոնսֆիլդ և իր ընկերները վճռական կերպով հակառակվեցան այդ բանին և հենց այդ ժամանակ առաջարկվեցաւ և ընդունվեցաւ միւս որոշումը, որով այդ վերանորոգութիւնների իրագործելու վերահսկողութիւնը, որոնց կոնդրէսը կը ստիպի Թիւրքիային կատարել, դրված է բոլոր մեծ պետութիւնների վրա։ Կարաթէոդորի մանաւանդ, ասում են, շատ թշնամաբար վերաբերվեց դէպի հայերը։

Ինձ հասած տեղեկութիւնների համաձայն, հայոց հասարակութիւնը, աւելի լաւ ծանօթ լինելով այժմ Բերլինի դաշնագրի հետ, պատրաստվում է, չեմ ասի ինքնավարական, բայց գոնէ Օսմանեան կայսերութեան կազմակերպութենից որոշ, կառավարչական կազմակերպութիւն տալ իրան։ Այդ նպատակին հասնելու համար, նա ամենայն նշանաւոր քաղաքներում կը նշանակէ պաշտօնական ձև ունեցող քաղաքական գործակատարներ, որոնց յանձնված կը լինի՝ տեղն ու տեղը վերաստուգել Թիւրքաց ադմինիստրացիայի գործողութիւնները, վերահսկել մանաւորապես հարկերի որոշելու և ժողովելու վրա, անձերի և կայքերի վերաբերեալ կանոնների ամեն տեսակ զեղծումների վրա, հետևել արդարադատութեան լաւ կատարելու վրա և մերկացնել, վերջապէս, բոլոր չարագործութիւնները։ Այս գործակատարները կը գործեն 61-որդ յօդուածի հիման վրա և ուղիղ յարաբերութիւններ կունենան եւրօպական հիւպատոսների հետ։ Բ. Դուռը, ի հարկէ, կը հակառակվի այս պրօգրամմայի կատարելուն, բայց ես հաստատ յոյս ունեմ, որ այդ բանը, այնու ամենայնիւ, կիրագործվի։ Բերլինի դաշնագիրը իսկապէս հայերին իրաւունք է տալիս, պետութիւնների ցանկութիւնների համաձայն կազմակերպութիւն տալ իրանց։ Եթէ Բ. Դռնից կարելի լինէր սպասել այս բեֆորմների իրագործման օրինաւոր սկիզբը, այն ժամանակ այդ սկիզբը երկար սպասեցնել կը տար իրան։

Այս բօպէիս ես կարող եմ սրա ապացոյցը ներկայացնել։ Թիւրքաց կառավարութիւնը ցանկանալով, իր սովորութեան համեմատ խաբել Եւրօպային, մէկ կօմիսար ուղարկեց Հայաստան, որին յանձնված է տեղն ու տեղը ուսումնասիրել գործերի դրութիւնը, հետազօտել միջոցներ, որոնք պէտք է ընդունվեն և այս բանի մասին տեղեկութիւն տալ Բ. Դրան։ Քսան անգամ, եթէ ոչ աւելի, այդպիսի կօմիսարներ ձևի համար ուղարկվել են Հայաստան, և այս բանը դեռ ոչ մի անգամ ամենափոքր օգուտ ևս չէ բերել հայերին։

Շէֆիկ-Բէյ (այդպէս անուանվում Բ. Դրան ընտրած նոր կօմիսարը)—պետական խորհրդի անդամ է, և յայտնի է իր դէպի քրիստոնեաները ունեցած ատելութեամբ. սա Ֆանատիկոս է, այս բառի բուն նշանակութեամբ։ Նա մի անգամ կատարեց մի և նոյն տեսակ յանձնարարութիւնը Ասիայում՝ և մանաւանդ նշանաւոր եղաւ թշուառ հայ ազգաբնակութենից բռնութեամբ խլած ստորագրութիւններով և քաջալերական վկայականներով, որոնց ընդդիմանալու ժամանակ բանտարկութեամբ էր սպառնում։

Եւ ահա այդպիսի մի մարդուն են այժմ յանձնում բարւոքել հայերի դրութիւնը։ Կարելի է երևակայել թէ ինչ կը ծագի այս բոլորից պ. Լայարդի միամտացնելու հակառակ։ Ահա թէ ինչի համար պատրիարքը, որին Բ. Դուռը խնդրում էր նշանակել իր կողմից երկու պատգամաւորներ, հրաժարվեց մասնակցել այս կատակերգութեան մէջ։ «Շէֆիկ-բէյի ազդարարութիւնը վաղուց կազմված է—ասաց նա մեծ վեզիրին, և ես չեմ կամենում հաստատել նրա ստախօսութիւնը երկու պատգամաւորների ներկայութեամբ։ Ինձ գոնէ մնում է իրաւունք բողոքել նրա հաստատութեան դէմ։» Սրբազան Ներսէսը դիտաւորութիւն ունի պահանջել, որ Շէֆիկ-բէյի հետ միասին նշանակվեն երեք կօմիսարներ՝ ռուսաց, անգլիական և Ֆրանսիական, այնպէս որ նոցա գործակցութիւնը կերաշխաւորի գոնէ որ փաստերը յեղաշրջված չեն լինի։ Այդպիսով, կարելի է գործի հետ կատարեալ ծանօթ լինելով, միջոցներ գտնել, որոնք հարկաւոր են կոնդրէսի նպատակին հասնելու համար։

Այնու ամենայնիւ անգլօ-Թիւրքաց դաշնագրի և անգլիական հովանաւորութեան դէմ, և նոյնպէս Կարաթէոդորի-փաշայի և Բ. Դրան հակառակ, հայերը երբէք չեն մոռանայ թէ ինչ բանի համար պարտական են ռուսներին, և կարելի է այժմ արդէն ասել, որ Հայաստանը բարոյապէս նուաճված է Ռուսաստանից։

ԻՏԱԼԻԱ

Հռոմից յուլիսի 22-ին հաղորդում են «Gazette d'Italie» լրագրին հետևեալը։ Երէկ երեկոյ երաժիշտների խումբը սովորականի համեմատ ածում էր Կօլօննայի հրապարակում։ Նատերը սկսեցին բղաւել թէ ազգային երգը երգվի։ Նուագածուները նախ նուագեցին թագաւորական մարշը, յետոյ Գարիբալդիի երգը։ Այդ ժամանակ բազմութեան մէջ լսվեցան աղաղակներ «կեցցէ Տրիէստ, կեցցէ Տրէնտ, կեցցէ Գարիբալդի։» Այս կեցցէների ձայները երբեմն դադարեցնում էին «կործանվի՜...» բղավելով։ Հարիւրի չափ մարդիկ բազմութեան միջից ջոկվեցան և սկսեցին գնալ դէպի աւստրօ-ունգարական դեսպանի բնակարանի կողմը, բղաւելով կեցցէներ և «կործանվի՜...»։ Բայց երբ մօտեցել էին, պօլիցիականները նրանց հրամայեցին ցրվել և բազմութիւնը ստիպվեցաւ նորից կեցցէներ և «կործանվի՜...» բղաւելով յետ քաշվել և գնալ Վատիկանում աւստրօ-ունգարական դեսպանի բնակարանի կողմը։ Այնտեղ էլ տեսան որ պօլիցիականներ շղթայի նման շարված, արգելեցին իրանց և հրամայեցին ցրվել։ Երաժիշտների խումբը շարունակում էր իր պրօգրամմայի համեմատ նուագներ ածել Կօլօննայի հրապարակում։ բայց խռովայոյզները 9-ը ժամին նորից պահանջեցին նուագել Գարիբալդիի երգը։ Խումբը սկսեց նուագել։ Այդ ժամանակ նորից մեծ աղմուկներով սկսեցին բղաւել կեցցէներ և «կործանվի՜...» և գնալ դէպի աւստրօ-ունգարական դեսպանատունը. բայց պօլիցիականները և զօրքերը նրանց յետ քշեցին երբ մօտեցել էին Վենեցիայի հրապարակը։ Ոչ ոքին չը կալանաւորեցին։ Ամբոխի մէջ խռովայոյզները քիչ էին. հետաքրքիր ժողովուրդը շատ էր։ Երէկ իրիկվայ այդ ցոյցը համակրութիւն չը գտաւ։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, 28 յուլիս 1878

Ահա երկու շաբաթ է, որ կոնգրէսի նստերը վերջացան, բայց նորա գործունէութիւնը շարունակվում է հասարակաց կարծիքի հետաքրքրութեան առարկայ լինել։ Ցատկանիշ մի արտայայտութիւնը այն է, որ ոչ մի կուսակցութիւն, ոչ մի պետութիւն գոհ չէ մնացել կոնգրէսի հետևանքներից, բացի Անգլիայից և նա էլ գոհ է միայն այն պատճառով որ կարողացել է իր գործերը վճռել կոնգրէսից դուրս և կոնգրէսի ժողովվելուց առաջ։ Կարծիք կայ մինչև անգամ, որ Անգլիան միայն այն պատճառով համաձայնվեց իր ներկայացուցիչներ կոնգրէսի համար ուղարկելու, որովհետև բոլորովին ապահովել էր իր սեփական դրութիւնը, այս պատճառով կարողացել է նա և այն զիջումներ անել, որ նորանից ոչ ոք չէր սպասում։ Բայց, ճշմարիտ, Անգլիան բացառութիւն է կազմում իր գոհ դրութեամբ։ Աւստրիան իբրև կառավարութիւն գուցէ նմանապէս գոհ է, որ կարողանում է առանց որ և է զոհաբերութեան մեծացնել իր կալուածները, բայց ժողովուրդը, մանաւանդ Ունգարիայի մէջ շատ դժգոհ է, տեսնելով որ Աւստրիայի մէջ մտել է մի նոր սլաւօնական տարր, որ ի հարկէ աւելի հեշտութեամբ կը միանայ մնացած սլաւօնական տարրերի հետ և կը պաշտպանի նրանց քաղաքականութիւնը Աւստրիայի մէջ, քան թէ կը համակրի ունգարացիների հակասլաւօնական ձգտումներին և ուղղութեանը։

Գերմանիան բոլորովին սառն պահեց իրան այս բոլոր արտաքին քաղաքականութեան մէջ. ինքն ոչինչ անմիջական շահեր չունենալով արեւելքում, նա կարողացել է ճշմարիտ անկողմնապահ դատաւոր լինել, հաշտեցնողի դերը իր վրա առնել, մանաւանդ որ նախագահութիւնը նրանն էր։

Իտալիան և Ֆրանսիան ընդհակառակը աւելի առիթ ունեն դժգոհ լինել, որովհետև առաջինի օգուտները թէև անմիջապէս կապված չեն արևելքի հետ, բայց նրան վնասակար կարող է լինել Աւստրիայի զօրեղանալը։ Ֆրանսիան էլ իր կողմից չէր ուզենայ բոլորովին կորցնել այն գիրքը, որ բռնած ունի Լիբանանի, Սիրիայի և Պալեստինայի մէջ, ուր եթէ նա նիւթական շահեր չունի, այնու ամենայնիւ բարոյական ազդեցութիւն գործել է շարունակ։ Թէև ֆրանսիացիք և մանաւանդ պ. Գամբէտտայի կուսակիցները ուզում են ցոյց տալ որ գոհ են Բերլինի կոնգրէսի վճիռներով, բայց իսկ այն ձևը որով նրանք այդ յայտնում են, ցոյց է տալիս, որ նրանց համար բոլոր վերջին անցքերը և մանաւանդ անգլօ-Թիւրք դաշնագրութիւնը անսպասելի և աննախագուշակելի էին։ Գամբէտտայի օրգանը «Républ. Française» լրագիրը մի կողմից, միւս կողմից ինքն պ. Գամբէտտան մի մասնաւոր խօսակցութեան մէջ, որ ունեցել է «Times» լրագրի թղթակից պ. դը Բլօվիցի (de Blowitz) հետ, յայտնում են, որ Ֆրանսիան կարող է գոհ լինել, որ Բերլինի կոնգրէսի առիթով քաղաքականութիւնը վերջապէս իր կանոնաւոր ընթացքը ստացաւ, որ առաջ եղած դաշնադրութիւնները, որոնք անբնական էին, քանդվեցան և նորեր պիտի կազմվեն։ Այսպէս «Rép. Franç.» կարծում է, որ երեք կայսրների անուանված դաշնադրութիւնը արդէն չը կայ, որ Աւստրիան այժմ անկասկած պիտի մօտենայ անգլիական քաղաքականութեանը և Ֆրանսիայի բնական շահերը նրան պիտի ստիպեն վերանորոգել իր բարեկամական յարաբերութիւնները Անգլիայի հետ, որի հետ միասին նա շատ ընդհանուր ձգտումներ և օգուտներ ունի—այս երկու երկիրները ամենահարուստ են ամբողջ Եւրօպայի մէջ և նրանց քաղաքական շահերը պիտի հետևանք լինեն նրանց առևտրական և արդիւնաբերական շահերի, որոնք երկուսի համար ընդհանուր են։

Աւելորդ եմ համարում բացատրել, որ երբ մի երկրի մէջ ձգտումն կայ իրան մխիթարել և հաստատել որ առիթ կայ բոլորովին գոհ լինել հետևանքներով մի չը նախագուշակած դրութեան, այդ արդէն ապացոյց է, որ և դժգոհութեան համար առիթ կայ։

Որ Թիւրքիան դժգոհ է—դրա մասին մի խօսք անգամ ասել աւելորդ է։ Նա իսկապէս դադարել է իր գոյութիւնը, դառնալով մասամբ իր թշնամիների. մասամբ իր բարեկամների զոհ։ Թիւրքիա իսկապէս չը կայ—Նրա տեղ կան այժմ զանազան սլաւօնական մանր պետութիւններ, իսկ Ասիայի մէջ այն ինչ որ չէ անցել Ռուսաստանի ձեռքը դարձաւ Անգլիայի սեփականութիւն։—Փոքր սլաւօնական պետութիւնները՝ Սերբիան, Չէրնօգորիան, և նրանց շարքում և Ռումինիան դժգոհ են որովհետև նրանց երկիրը նրանց ցանկութիւնների չափ չաւելացաւ և նրանք իրանց զոհաբերութիւնները բաւական վարձատրած չեն համարում։ Նոյնը կարելի է ասել և Ցունաստանի մասին, որ մի առիթ ունենալու համար իր երկիրը մեծացնելու, վերջին րօպէին երբ պատերազմը աւարտվելու վրա էր շտապեց մի ապստամբութիւն պատրաստել Թէսալիայի և Էպիրոսի մէջ։ Բայց երկու երկիրներ որոնք ճշմարիտ գուցէ ամենքից աւելի տանջվեցան և կամ թոյլ վարձատրութիւն ստացան կամ ստիպվեցան նոյն դրութեան մէջ մնալ—դրանք են մի կողմից Բօսնիան և Հերցեգովինան, որոնք ուզեցան ազատութիւն իրանց համար և դրա փոխարէնը Թիւրքիայի հպատակութենից անցան Աւստրիայի հպատակութեան տակ, իսկ միւս կողմից Կանդիա կը ղզին, որի դրութիւնն էլ աւելի նախանձելի չէ՝ նրա բնակիչները իրանց տարած դարևոր ճընշումների, անդադար և չարունակ դանգատների և ապստամբութիւնների, զոհաբերութիւնների և արիւն թափելու համար ստացան այն վարձատրութիւնը—որ նրանք էլի մնացին Թիւրքիայի հպատակներ և նրանց էլի մի անգամ խոստացան վերանորոգութիւններ մտցնել.—կիրագործվեն արդեօք այդ խոստումները, դրա մասին ժամանակը կը որոշէ կարճ միջոցում, Կանդիօտներին ազատութիւն չնորհել՝ Անգլիայի օգուտների ընդդէմ էր և այդ պատճառով նրանք մնացին Թիւրքիայի տարուկ։

Հայերի դժգոհութիւնը, որի մասին հաղորդած եմ ձեզ արդէն կարճ խօսքերով և որը նրանք ցոյց տուին կոնգրէսի վերջին օրը իրանց պատգամաւորների ձեռքով մի բողոք ուղարկելով կոնգրէսի ներկայացուցիչներին, գուցէ մի կողմից իրաւացի է։ Բայց միւս կողմից անհերքելի է որ Թիւրքիայի հայերը և այս հետևանքներով կարող են գոհ լինել, աչքի առաջ ունենալով նախ որքան բարդվեցաւ Հայաստանի հարցը անգլօ-Թիւրք դաշնագրից յետոյ և երկրորդ որ Հայաստանին աւելի աջողվեցաւ իրագործել իր ցանկութիւնները, քան թէ ասիական Թիւրքիայի բոլոր մնացած գաւառներին։ Բայց դրա մասին մի ուրիշ անգամ։

Ա. Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Times» լրագիրը յուլիսի 25-ին հրատարակել է մի յօդուած որի մէջ նշանակած են այն վերանորոգութիւնները որոնց Անգլիան կը պահանջէ Փոքր-Ասիայի համար։ Այդ գրվածը լօրդ Բիկոնսֆիլդից թելադրված է համարվում։ Վերանորոգութիւնները կը լինեն հետևեալները՝ կառավարիչները անդադար փոփոխելու սովորութիւնը դադարեցնել, կրթված և ընդունակ դատաւորներ անուանել, մի գործունեայ պօլիցիա հաստատել և թագաւորական տուրքերի կապալառութեան դրութիւնը ջնջել։ Սուլթանի գերիչխանութեան իրաւունքներին չը պէտք է դիպչել։

—Լօնդօնից հաղորդում են յուլիսի 25-ին որ համայնքների խորհրդարանում պ. Կօուէն ներկայացրել է մի դրութիւն որով խնդրել է դատաստանի ենթարկել լօրդ Բիկոնսֆիլդին։ Պ. Կօուէն աւելացրել է որ ինքը չի պաշտպանի այդ դրութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՄՕՍՏԱՐ, 25 յուլիսի (6 օգոստոսի)։ Սարայևօվից եկած լուրերին նայելով, Հաջի Լայեա մի ազդարարութիւն հրատարակեց, որի մէջ ասված է, թէ զորանի կրօնական ոստանաւորները շարիատի համեմատ միակ քաղաքական օրէնքներ են։ Քրիստոնեայ ազգաբնակութեանը տիրեց սաստիկ յուզմունք։

ՎԻԵՆՆԱ, 27 յուլիսի (8 օգոստոսի)։ «Polit. Corresp.» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, յուլիսի 26-ին, հետևեալը։ Բ. Դուռը տեղեկութիւն ստանալով, որ մի քանի նահանգների բնակիչների մէջ հակումն է նշմարվում դէպի զինաւորվելը և ասպատակ (պարտիզան) խմբերի կազմելը, հրամայեց իր նաւատորմին ուղևորվել դէպի Ալբանիայի ծովեզերները, այնտեղ շրջելու համար։ Ասում են, որ գրաւված տեղերի դատարկելու մասին բանակցութիւնները ռուսների և Թիւրքերի մէջ հասել են արդէն մի նախնական համաձայնութեան։ Ռուսները, համեմատ Բերլինի դաշնագրութեան, եօթ օրից յետոյ կը սկսեն ընդհանրապէս դատարկել բոլոր գրաւված տեղերը։ Նոյն միջոցին Բաթում և Վարնա բերդերը պէտք է յանձնվին ռուսներին, որից յետոյ միայն, օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 5-ը ռուսները կը հեռանան Կ. Պօլսի շրջականներից։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խնձ յանձնված լինելով ԹԻՖԼԻՍԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ վարձել, խնդրում եմ ցանկացողներին պայմանների մասին խօսելու դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը. իսկ օտարաքաղաքցիք կարող են իրանց ցանկութիւնը յայտնել նամակով։ Ընյարմար համարվածներին չի պատասխանվի։

Ց. Մէլիք-Յակոբեանց

Օգոստոսի կէսից լոյս կը տեսնեն Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ հետևեալ նոր աշխատասիրութիւնները՝

1) Ընթերցարան հայերէն լեզուի «ՆԱՀԱՊԵՑԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, երրորդ տարվայ ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ» անունով.

2) «ՀԱՄԱՌՕՏ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ։»

Ցանկացողները ստանալ չէեալ գրքերը իր ժամանակին կարող են դիմել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» կամ Ջաք. Գրիգորեանի գրավաճառանոցը։

2—3

Պերճ Պռօշեանցը յայտնում է իր «ԿՌՈՒԱԾԱՂԻԿ» վէպասանութեան յարգոյ բաժանորդներին, որ վերջը դուրս կը գայ մինչև օգոստոսի վերջը և այն ժամանակը ամեն ոք կը ստանայ իր համարը։

ՓԱԽԵԼ Է ՈՐՍԻ ՇՈՒՆ

«Բօնդեր» ցեղից սև և մխրագոյն Տրեզօր անունով։ Գտնողից խնդրում են բերել Էքսկլերկրոփ գրասենեակը Պ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ, որի համար կը ստանայ ՄԵԾ ՊԱՐԳԵՒ։

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԻՏԱԿ ԲՈՒՄԱԶԷՅԱ վինուորականների չորերի համար արշինը 1 ր. և բարձր, ՌԻՆՍԻ չորերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ և ԽԻՆԱՑԻ ԲԱԼԶԱՄԵՆ (խէղ) $1^1/_4$ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր, ՑԻՏՐԱՏ մագնեզի $1^1/_2$ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մահճակալներ 5 ր. և բարձր, սղոցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ գիւմինը 3 ր., ԳՐԻՉՆԵՐ արզը 15 կ. և բարձր, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻԳԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծածկոցներ, մակինտօշներ, երեխաների չորեր 4 ր. և բարձր, հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պօղնօսներ 10 կ. և բարձր, ռոմ, կօնեակ, պօրտ-վէյն, խերես և անգլիական օղի $1^1/_2$ ր., ՊԱՆԻՐ չեստեր 60 կ. և բարձր։ Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը։

18—20

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ)

Վաճառվել սկսան հետևեալ նոր տպագրութիւնները՝

1. Նախակրթանք հայերէն գրաբար լեզուի, աշխատ. Գ. Արք. Այվազեան, հինգերորդ տիպ, ճոխագոյն քան առաջինները։ Գիրքը նշանակված է իբրև սկզբնական ձեռնարկ գրաբար լեզուն սկսողների համար մեր ազգային ուսումնարաններում։ Գինն է 40 կոպէկ. գումարով գնողներին զիջումն կը լինի։

2. Աղաւ երգեր, բանաստեղծութիւնք Գամառ-Քաթիպայի, տպագրութիւն «փարձ» եռամսեայ հանդէսի։—Սա մի փոքրիկ տետրակ է բաղկացած ընդամենը 8 հատ բանաստեղծութիւններից, որոնց մէջ հռչակաւոր բանաստեղծը եռանդոտ խօսքերով յայտնում է ճնշուած հայերի հոգեկան մրմունջները և նոցա բողոքը դէպի իրանց կառավարողները, առաջնորդներն ու հարուստները. բողոքում է դէպի Եւրոպան, որ տարբերում է հայերին սլաւօններից։ Ամեն մի բանասէր հայի բարոյական պարտաւորութիւնն է տարածել այս տետրակը ժողովրդի մէջ մեր հայաբնակ քաղաքներում. Գինն է 5 կոպէկ։ Օտար քաղաքներից գումարով պահանջողներին զիջումն կը լինի։ Ծախվում է բացառապէս կենտրոնական գրավաճառանոցում։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ՋԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. ԵՒՏՈՒՇԵՎՍԿԻ.—Ժողովածու թուաբանական խնդիրների յարմարեցրած հայ ուսումնարանների համար I մասն—ամբողջ թւեր, 3-դ տպագրութիւն հիմնական փոփոխութիւններով և յաւելմունքներով. փոխադրութիւն Մարտ. Սիմէօնեանց։ 1878 թ. գինն է հատով առնողների համար 50 կ. գումարով—45 կ.։

2. ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ առաջին տարի—գրել և կարդալ աշխատասիրութիւն Ղ. Աղայեանցի, գինն է 15 կ.։

3. ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ծնողաց և ուսուցիչների համար—Ղազար. Աղայեանցի. գինն է 20 կ.։

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ

ՀԱՑ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Երևանայ սուրբ ԳԱՅԵԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ երեք դասատան համար հարկաւոր են մի ՈՒՍՈՒՑԻՉ շաբաթական 24 դասով ռուսաց լեզուից երկրորդ դասատնում, թուաբանութենից, աշխարհագրութենից և ընդհանուր պատմութենից, և մի ԿԱՐԳԱՊԱՀ ՎԱՐԺՈՒՀԻ շաբաթական 16 դասով ռուսաց լեզուից պատրաստական և առաջին դասատների և ձեռագործութեան համար խրաքանչիւրը տարեկան 500 րուբլ ռոճիկով. ցանկացողները թող շտապեն յայտնել դպրոցի տեսչութեան այս հասցեով.—Въ Эривань Протоіерею Іосифу Мелянцу.

3—3

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

ՅՈՒԼԻՍԻ 28. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յուլիսի 27-ին)	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	7	95
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1275	—
Վիգրինչի $5^0/_0$ առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ $5^0/_0$ վիգրինչի »	235	—
Մարսելի կուրսը 267—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	9	32
Վենայի կուրսը ամէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	101	—
Շաքարը բրօցկու . .	7	50
„ միւս տեսակը .	7	40
„ չաքարաւազը .	5	80
„ տրանզիտը. .	5	85
„ մաքուր վճարած	11	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը Թուշի . . .	8	—
„ Թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
„ Երևանի. . . .	—	—
Գարին.	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	12	80
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրեզոնը (լասը) Ագուլեաց	45	—
Կոֆէն մօկօի. . . .	25	50
„ լիվանի . . .	23	50
„ մարտինկօյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 րուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, $9^1/_2$ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Ա. Ռնով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ. .	1. 29	11. 57
Րիօն . . .	6. 47	
փօթի . . .	9. 40	
	առաւօտ.	
փօթիից . .	9. 13	
Րիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Րիօն. . .	9.	6. 75	3. 75
փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխուի տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	կօպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան , . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչաբեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտօվ կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Գավրօնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակստ վեներական և կաշու հ. Օրբէլի ատամնացաւեր։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտօվ մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԼԱԲԻՆՍԿԱՅԱ. Ս. Ա. Գովաբանեցէք որքան ուզում էք «Կանաչ Հայաստանը», բայց երբէք բանաստեղծ չէք դառնայ։

—ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ. Կ. Լ. Մ. Այո պրեմիաներ եկող տարվանից ունենալու ենք։ Պրեմիաները կը լինեն երեք, մէկը 500 ր., միւսը 300 ր., երրորդը 200 ր.,

—ԹԻՖԼԻՍ. Մ. Մ. Սպասեցէք, դեռ պէտք է մէկի հետ վերջացնենք, որ կարողանանք միւսի գործերը հրապարակ հանել։ Ինչպէս էիք համբերում տռաջ, երբ «Մշակ» շաբաթը մի անգամ կամ երկու անգամ էր դուրս գալիս,

—ԿՕԶՕՐ. Ե. Փ. Ե. Հասցէն կը փոխենք։

—ԲԱԳՈՒ. Տ. Ե. Ա. Նամակը դեռ չենք տեսել։

—ՇՈՒՇԻ. Ա. Թ. Գրեցէք մեզ ինչտեղ է Գ. Պ.

Дозволено Цензурою 27 Іюля 1878 г. Тифлисъ

Типографія Мартиросіанца

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ